ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. **Անունը, ազգանունը՝** Միլենա Հովհաննիսյան
2. **Զբաղեցրած պաշտոնը՝** Միջազգային համագործակցության վարչության պետ
3. **Գործուղման վայրը և ժամկետները՝** Փարիզ (Ֆրանսիայի Հանրապետություն) 2025 թվականի հունիսի 29-ից մինչև հուլիսի 2-ը ներառյալ
4. **Հրավիրող կողմը՝** Զարգացման ֆրանսիական գործակալության
5. **Գործուղման նպատակը՝**

Մասնակցություն Զարգացման ֆրանսիական գործակալության (ԶՖԳ) կողմից կազմակերպվող ՀՀ-ԶՖԳ առաջին տարեկան խորհրդակցություններին:

6. **Քննարկված թեմաները՝**

1. Հայաստանի ռազմավարական առաջնահերթությունների ներկայացում
2. ԶՖԳ-ի հետ համագործակցության ծրագրի վերանայում և հետագա համագործակցություն
3. Հայ-ֆրանսիական տնտեսական համագործակցության 2021-2026 ճանապարհային քարտեզ
4. Տարածքային զարգացում և մշակութային ժառանգության պահպանում

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝**

Խորհրդակցությունների ընթացքում հանդես եմ եկել ելույթով՝ խոսելով ԶՖԳ-ի հետ քաղաքականության վրա հիմնված վարկի տեսքով բյուջետային աջակցության ծրագրի շրջանակներում իրականցվող աշխատանքներից: Այս համատեքստում ներկայացրել եմ «Հարկաբյուջետային կայունության և ֆինանսական շուկաների զարգացման ծրագրի» (Ծրագիր) Ենթածրագիր 3-ի բարեփոխումների հիմնական շրջանակը:

Ծրագրի միջոցով նախատեսվում է ներգրավել շուրջ 150 միլիոն եվրո բյուջետային աջակցություն՝ հիմնված Ենթածրագիր 3-ի ներքո վարկային միջոցների ստացման նպատակով կազմված քաղաքականության աղյուսակի վրա: Ենթածրագիր 3-ի

շրջանակում բարեփոխումները կառուցված են հետևյալ հիմնական քաղաքականության ուղղություններով.

- Հարկաբյուջետային կառավարում և թափանցիկ ֆինանսական քաղաքականություն
- Բյուջետային համակարգի կառավարման արդյունավետություն
- Պետական պարտքի և ֆիսկալ ռիսկերի կառավարման քաղաքականություն
- Հանրային ներդրումների կառավարում
- Ենթակառուցվածքային ներդրումներ
- Պետական գնումների ընթացակարգեր
- Տնտեսական և կլիմայական քաղաքականություն
- Պետական արժեթղթերի և ֆինանսական շուկաների ենթակառուցվածքների զարգացում
- Ֆինանսական գործիքներ և ներդրումներ
- Կորպորատիվ կառավարում
- Կանաչ ֆինանսական գործիքներ
- Տարեկան և միջնաժամկետ բյուջետային պլանավորման կապ կլիմայական և գենդերային քաղաքականությունների նպատակների և արդյունքների հետ
- Աղետների ռիսկի կառավարում
- Էլեկտրոնային սնանկության համակարգ (e-Bankruptcy)

Նշվել է, որ ՀՀ կառավարությունը իրականացնում է մի շարք բարեփոխումներ՝ ուղղված միջնաժամկետ բյուջետային պլանավորման և ազգային ռազմավարական նպատակների միջև կապի ուժեղացմանը, գենդերային և կլիմայական քաղաքականությունների ինտեգրմանը, բյուջետային կառավարման արդյունավետության և ճկունության բարձրացմանը՝ հարկաբյուջետային կայունության, թափանցիկության և արդյունավետ ֆինանսական կառավարման ամրապնդման նպատակով:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Խորհրդակցությունների շրջանակներում փաստաթղթեր չեն ստորագրվել, սակայն ձեռք են բերվել պայմանավորվածություններ Բարգուշատի թունելի շինարարության ծրագրի ֆինանսավորման մեխանիզմի հստակեցման շուրջ ս.թ. օգոստոսին բազմակողմ

քննարկում կազմակերպելու, ինչպես նաև ՀՀ-ԶՖԳ երկրորդ խորհրդակցությունները 2026թ. ՀՀ-ում անցկացնելու վերաբերյալ:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Այս խորհրդակցությունները հնարավորություն տվեցին ամրապնդելու ՀՀ գործընկերությունը ԶՖԳ–ի հետ՝ ապահովելով մեր նպատակների և գործողությունների ավելի սերտ համադրվածություն: Խորհրդակցությունները միաժամանակ կարևոր էին երկկողմ վստահության խորացման և գործընկերության ամրապնդման տեսանկյունից՝ ապահովելով բաց և կառուցողական երկխոսություն:

Ակնկալվում է վերջինիս արդյունքներով ԶՖԳ հետ ձևավորել առաջիկա եռամյա բյուջետային աջակցության ծրագիրը, հստակեցնել ֆինանսավորման չափը, վերջնականացնել Բարգուշատի թունելի ֆինանսավորման շուրջ բանակցությունները, իսկ դաշտային այցելությունների արդյունքում ներկայացված փորձի (թափոնների կառավարման, ապակենտրոնացված կառավարման և այլն) հիման վրա դիտարկել և ներկայացնել համագործակցության նոր ուղղություններ:

10. Գործուղվող՝

Միջազգային համագործակցության վարչության պետ Միլենա Հովհաննիսյան

07.07.2025թ.